

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ  
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ  
ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

**1. Ընդհանուր դրույթներ**

1. 1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի երիտասարդ դասախոսների խրախուսման գործընթացը իրականացվում է <ՀՀ կրթության մասին> օրենքի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների պահանջներին համապատասխան:

1. 2. Երիտասարդ դասախոսների խրախուսման գործընթացը մասնաճյուղը կազմակերպում է համապատասխան հանձնաժողովի կողմից, որը հաշվետու է միայն մասնաճյուղի տնօրենի առաջ:

1. 3. Սույն կանոնակարգը սահմանում է մասնաճյուղի երիտասարդ դասախոսների խրախուսման ողջ գործընթացը, նրա կարգավորման ենթակա խնդիրները:

1. 4. Սույն կանոնակարգը կարող են լրացվել կամ փոփոխվել միայն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Գիտական խորհրդի որոշմամբ:

**2. Հանձնաժողովի իրավունքներն ու պարտականությունները**

Մասնաճյուղի <Երիտասարդ դասախոսների խրախուսման> հանձնաժողովը իրավունք ունի.

2. 1. Հանձնաժողովը իր հերթական նիստերում քննարկում է երիտասարդ դասախոսների խրախուսման վերաբերյալ մասնաճյուղի ֆակուլտետներից ստացված միջնորդությունները և կայացնում է համապատասխան որոշում, որը այնուհետև ներկայացվում է մասնաճյուղի տնօրենի հաստատմանը:

2. 2. Հանձնաժողովը իր որոշումները կայացնելու ժամանակ ղեկավարվում է հետևյալ չափորոշիչներով՝

- երիտասարդ դասախոսը մասնակցել է որակավորման բարձրացման կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- երիտասարդ դասախոսը ակտիվորեն մասնակցում է մասնաճյուղում կազմակերպվող գիտագործնական և հետազոտական աշխատանքներին,
- նախաձեռնում և մասնակցում է մասնաճյուղի հասարակական կյանքին և կազմակերպչական գործունեությանը,
- ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքով ստացել է բարձր գնահատական,
- հասարակության, արտաքաին շահառումների, ինչպես նաև աշխատանքային կոլեկտիվի անդամների կողմից բնութագրում է դրական կողմերով:

***3. Երիտասարդ դասախոսների խրախուսման քաղաքականությունն ու նրա մեջ***

***ներառվող գործընթացներն ու մեխանիզմները***

3. 1. Դասախոսական թափուր տեղերի համար մրցութային կարգով հիմնականում ընդունվում են երիտասարդ դասախոսներ, որոնց տրվում են լիարժեք հնարավորություններ զբաղվելու գիտագործնական և հետազոտական աշխատանքներով:
3. 2. Երիտասարդ դասախոսներին հնարավորություն է տրվում մասնակցելու որակավորման բարձրացման կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
3. 3. Երիտասարդ դասախոսների կողմից իրականացվող ինքնակրթությունն ու գիտամանկավարժական գործունեությունը մասնաճյուղում գնահատվում և խրախուսվում է: Այդ նպատակով նրանց տրամադրվում է լաբորատորիաներ, արհեստանոցներ, ֆինանսական միջոցներ և այլ օժանդակ հնարավորություններ:
3. 4. <Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին> պետական ծրագրի շրջանակներում նախատեսվում է բնակելի շենք:
3. 5. Համաձայն մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնների երիտասարդ դասախոսը աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, շարունակական անբասիր աշխատանքի և աշխատանքում նորամուծությունների և այլ ձեռքբերումների համար կարող է մասնաճյուղի տնօրենի կողմից խրախուսվել հետևյալ կարգով`

ա/ շնորհակալության հայտարարում

բ/ միանվագ դրամական պարգևատրում

գ/ պատվոգրի հանձնում

- դ/ հուշանվերներով պարզևատրում
- ե/ կարգապահական տույժի հանում
- զ/ լրացուցիչ վճարի տրամադրում:

#### ***4. Հանձնաժողովի կառուցվածքն ու կառավարումը***

4. 1. Երիտասարդ դասախոսների խրախուսման հանձնաժողովը անմիջականորեն ենթարկվում է մասնաճյուղի տնօրենին:
4. 2. Հանձնաժողովը ղեկավարում է նրա նախագահը, ում նշանակում և պաշտոնից ազատում է մասնաճյուղի տնօրենը:
4. 3. Հանձնաժողովի մեջ մտնում են նրա չորս անդամները, այդ թվում՝
  - մասնաճյուղի գլխավոր հաշվապահը,
  - մասնաճյուղի ուսումնամեթոդական բաժնի վարիչը,
  - իրավախորհրդատուն,
  - արհմիութենական կոմիտեի նախագահը:
4. 4. Հանձնաժողովի նախագահը պատասխանատու է հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքների որակի, օրինականության և վերջնական արդյունքների համար:
4. 5. Մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված երիտասարդ դասախոսներին խրախուսելու մասին միջնորդություններում սխալներ և թերություններ հայտանբերելու դեպքում հանձնաժողովի նախագահը անմիջապես տեղյակ է պահում տնօրենին: